ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- սեպտեմբերի 2022 թվականի №---Ա
ք. Երևան

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի օգոստոսի 26-ի №2/9-054 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը պատկանող «Արգել» հիդրոէլեկտրակայանում գտնվող №1 ուժային տրանսֆորմատորային խմբի A,B,C (ՕԴԳ-23000/110 միաֆազ), №2 ուժային տրանսֆորմատորային խմբի B,C (ՕԴԳ-23000/110 միաֆազ), №4 ուժային տրանսֆորմատորային խմբի B ֆազերի (ՏԵԴ-9009 միաֆազ), ինչպես նաև «Հրազդան» հիդրոէլեկտրակայանում գտնվող №2 ուժային տրանսֆորմատորային խմբի A,B,C ֆազերի (ՕԴՏԳ-40000/220 միաֆազ) ապամոնտաժումից առաջացած մետաղների ջարդոնը «Ամպեր» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը պատկանող «Արգել» հիդրոէլեկտրակայանում գտնվող №1 ուժային տրանսֆորմատորային խմբի A,B,C (ՕԴԳ-23000/110 միաֆազ), №2 ուժային տրանսֆորմատորային խմբի B,C (ՕԴԳ-23000/110 միաֆազ), №4 ուժային տրանսֆորմատորային խմբի B ֆազերի (ՏԵԴ-9009 միաֆազ), ինչպես նաև «Հրազդան» հիդրոէլեկտրակայանում գտնվող №2 ուժային տրանսֆորմատորային խմբի A,B,C ֆազերի (ՕԴՏԳ-40000/220 միաֆազ) ապամոնտաժումից առաջացած մետաղների ջարդոնը «Ամպեր» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառելու գործարքի կնքմանը:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում.

2) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- սեպտեմբերի 2022թ.